պեալ և յեցեալ յալիս, զիա՞րդ հնար է 'ի կշիռ գալ ընդ առն թագաւորի եւ իշխանի. զի ամենայն դժուարինք, դիւրինք և հնարաւորք են առ նմա. զի խոստացաւ նա տալ յիւրաքանչիւր ամի Սուլթանին մերոյ զայս չափ ընծայս և տուրս ծառայս և ստրուկս, և որ ինչ միանգամ կարեւոր իրք դիպեսցին մեզ այլազգեացս յաշխարհին իւրում, անյապաղ կատարել. միթէ և դուք կարո՞ղ էք վճարել զայսոսիկ։ Լուեալ Մարտիրոսի զխիստ բանս բարեկամաց իւրոց՝ 'ի միտ առ թէ այնուհետեւ անհնար է շահիլ զմիտս նոցա. և զի ինքն մերկացեալ էր յամենայն ընչից և դրամոց. զի զոր ինչ ժողովեալ էր ցայն վայր՝ ծախեաց զամենայնն։ Եւ այլազգի բարեկամք նորին այլ ոչ եւս անասային ճարտարութեան բանից և քաղցրութեան բարուց. զի վաղ փոխանակեալ էին զայնս ընդ մեծապարգեւ ընծայս վրայ։ Եւ մանաւանդ հասեալ էր յականջս նորա տառապանք ազգին իւրոյ որ ընդ իշխանութեամբ նոցին. զի յամենայն ուրեք խոշտանգանօք ժողովին զդրամս 'ի հատուցումն խոստացեալ հարկին։ Ուստի 'ի բաց եկաց 'ի Գողգոթայէ. և խորհրդով Սուլթանին ընտրեաց վիճակ ազգին իւրոյ զաղօթատեղին թագաւորաց յանդիման Գողգոթայի 'ի տաճարի անդ, եւ խնդրեալ էառ 'ի Սուլթանէն վկայութեամբ դատաւորաց եւ մեծամեծացն այլազգեաց. լինել տեղին այն սեփհական ժառանգութիւն ազգին Հայոց, և փակեցին զայն անիծիւք ըստ օրինաց իւրեանց. և 'ի դարձին իւրում Մարտիրոսի յԵրուսաղէմ, եւ հաստատել 'ի դատաւորաց և 'ի վերակացուաց մզկթին Օմարայ։ Եւ ապա սկիզբն արարեալ շինեաց զայն եկեղեցի վայելուչ կրկին խորանօք, ծախեալ 1000 Ֆլորին, և անուանեաց երկրորդ Գողգոթայ. և զարդարեալ պայծառացոյց եկեղեցական զարդուք։ Իսկ նախանձորդք ազգիս՝ դարձեալ ոչ դադարէին 'ի յուզելոյ զաղմուկս և խռովութիւնս, եւ կամէին խափանել զգործն 'ի ձեռս այլազգեաց, զի հակառակ և դժպիհի իմն էր նոցա շինութիւն տեղւոյն, և բնակութիւն միաբանացն Հայոց 'ի տաճարի անդ։ Այլ Մարտիրոս ծախեալ բազում ինչ, յաղթեաց ամենայն դժուարութեանց և խափանեաց զխորհուրդս նոցա, և 'ի դլուխ եհան զգործն, որոյ բովանդակ ծախուց գումարն